

Ս.Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Ս.Մ. ԲԱԽՇՅԱՆ

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ
ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ժամանակակից ՀՀ հանքարդյունաբերությունը շահագործում է հիմնականում խորհրդային տարիներին հայտնաբերված հանքավայրերը: Պետության ներդրումները երկրաբանահետախուզական աշխատանքներում համարյա բացակայում են, և ոլորտը զարգանում է օտարերկրյա մասնավոր ներդրումների հաշվին, որն անհրաժեշտ է դարձնում երկրի շահերին համապատասխան նպատակաուղղված քաղաքականության մշակումը և իրագործումը տնտեսական ու իրավական դաշտում: Փորձ է արվել գտնել Հայաստանի համար իրատեսական այն մոդելը, որը կնպաստի ոլորտի կայուն աճին:

Առանցքային բաներ. օգտակար հանածոների պաշարներ, երկրաբանահետախուզական աշխատանքներ, հանքավայրի հետախուզման իրավունք, կայուն տնտեսական աճ:

Ներածություն: Հայաստանը շարունակում է մնալ հիմնականում հանքարդյունաբերական արտադրանք արտահանող երկիր, և որքան էլ տնտեսապես արդյունավետ չէ հումքային տնտեսությունը, զարգացման ներկա միտումների պարագայում ոլորտը կշարունակի առաջատար դեր ունենալ երկրի երկարաժամկետ զարգացման մեջ: Կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է, որ երկիրը մշտապես ապահովված լինի օգտակար հանածոների երկարաժամկետ պաշարներով, և այդ պաշարները առաջանցիկ աճ ունենան արդյունահանման նկատմամբ: Այդ պատճառով ընդերքի երկրաբանության և հետախուզության խնդիրները կարևորվում են կայուն տնտեսական աճի տեսանկյունից: Անհրաժեշտ են գործող տնտեսական մեխանիզմներ, որոնք կխթանեն օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերումը Հայաստանում:

Խնդրի դրվածքը: Ներկայումս հանքարդյունաբերությունը շարունակում է գործունեություն ծավալել հիմնականում Խորհրդային Միության տարիներին կատարված հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերված հանքահումքային հենքի վրա: Նոր պաշարների հայտնաբերումը, որն իրականացվում է երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով, ըստ ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի, կարող է, բացի պետությունից, կատարվել նաև մասնավոր ներդրողների միջոցներով, այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների, որոնք ձեռք են բերել այդ իրավունքը: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունը տրվում է 3 տարին չգերազանցող ժամկետով, որն ընդերքօգտա-

գործողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել միմյանց հաջորդող 3 ժամանակահատվածներով՝ յուրաքանչյուր անգամ 2 տարուց ոչ ավելի ժամկետով [1]:

Այս ոլորտում ներդրումների խթանման նպատակով անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների համար արտոնյալ պայմաններով արդյունահանման իրավունք ստանալու գործընթացում:

Հետազոտության արդյունքները: ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքում նշվում է, որ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը իրավունք ունի առաջնահերթությամբ ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ընդերքի այն տեղամասի նկատմամբ, որի վերաբերյալ սեփական միջոցների հաշվին ստացել է երկրաբանական տեղեկություն [2]: Սակայն այս արտոնությունը դեռևս բավարար չափով չի խթանում մասնավոր ներդրողներին՝ մեծացնելու երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալները: Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1995-2014թթ. կտրուկ նվազել են այդ աշխատանքների ծավալները ոչ միայն պետական բյուջեի, այլև մասնավոր ներդրումների (հիմնականում օտարերկրյա) հաշվին: Միայն 2014թ-ին առկա է ներդրումների աճ մինչև 1,3 մլրդ դրամ, որն ամբողջությամբ կատարվել է մասնավոր սեկտորի կողմից: Վերջին տարիների կտրվածքով (2012-2014թթ.) պետական բյուջեից երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակով միջոցներ չեն հատկացվել:

Աղյուսակ

ՀՀ երկրաբանությունը և հետախուզությունը 1995 – 2014թթ. [3]

Տարեթիվը	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Կատարված երկրաբանահետախուզ. աշխ. ծավալը, ընդամենը, մլն դրամ	587.3	400.8	358.1	304.4	274.7	73.1	61.0	124.1	109.5	206.8	190.4	198.4	325.4	337.3	110.9	54.7	108.1	153.7	125.0	1332.7
այդ թվում՝ պետ. բյուջեի հաշվին	-	-	-	-	101.3	37.5	-	28.3	24.9	15.5	42.2	24.0	38.4	39.3	26.3	8.0	3.9	-	-	-

ՀՀ-ում երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալների նվազման առկա միտումը և ցածր մակարդակը համահունչ չեն համաշխարհային զարգացումներին: Ամբողջ աշխարհում աճում են հետախուզական ծախսերը նոր հանքավայրերի հայտնաբերման ուղղությամբ, ընդ որում, զարգացող երկրներում աճի տեմպերը գերազանցում են զարգացած երկրների ցուցանիշը [4]: Մեր կարծիքով, դրա բացատրության երկու պատճառ կա. նախ՝ զարգացած երկրներն ունեն համեմատաբար լավ ուսումնասիրված ընդերք, իսկ երկրորդն այն է, որ զարգացած երկրները ձգտում են սեփական չվերականգնվող մետաղական ռեսուրսների պաշարները չսպառել (օրինակ, ԱՄՆ-ում պղնձի փակված հանքավայրերի հայտնի օրինակը) և այդ ռեսուրսների նկատմամբ ունեցած պահանջարկը բավարարել զարգացող երկրների հաշվին:

Հայաստանում Խորհրդային Միության փլուզումից հետո երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվել են հիմնականում արտասահմանյան սեփականատերերի մասնավոր միջոցներով, բայց ոլորտում բավարար չափով ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է պետության կողմից արդյունավետ տնտեսական լծակների կիրառում: Նոր հայտնաբերված պաշարների աճը ցածր է արդյունահանման տեմպերից:

Վերջին 20 տարիների ընթացքում Հայաստանում նոր հայտնաբերված առաջին ոսկու հանքավայրը Ամուլսարն է (տեղակայված է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական սահմանում), որը հայտնաբերվել է 2006թ.-ին Գեոթիմ ՓԲԸ հայկական երկրաբանահետախուզական կազմակերպության կողմից: Ընկերությունը հիմնադրվել է 2005թ.-ին, նրա բաժնետոմսերի 95%-ը պատկանում է Լիդիան Ինթերնեյշնլին, որի հիմնական բաժնետերերն են Համաշխարհային բանկի խմբի Միջազգային ֆինանսական կորպորացիան, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը և մի շարք ինստիտուցիոնալ ներդրողներ Հյուսիսային Ամերիկայից և Եվրոպայից [5]:

Կապանի նախկին լեռնահարստացման կոմբինատը (ներկա սեփականատերը՝ ռուսական «Պոլիմետալ» բաժնետիրական ընկերություն) վերջին տարիներին իրականացրել է երկրաբանահետախուզական աշխատանքներ Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից հարավ ընկած տարածքում, որի արդյունքում հանքավայրի պաշարները ստացել են նոր գնահատում:

Հայաստանում նոր հանքավայրերի հայտնաբերումը ներկայումս հիմնականում պայմանավորված է օտարերկրյա ներդրողների շահերով և ոչ թե երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու նպատակով երկրի նպատակաուղղված քաղաքականությամբ: Փորձենք այլ երկրների օրենսդրության ուսումնասիրու-

թյամբ պարզել, թե ինչպիսի լծակներով կարելի է մեծացնել նոր պաշարների հետախուզումը:

Միջազգային պրակտիկայում (ԱՄՆ, Ֆրանսիա, Արգենտինա, Ղազախստան, Լիտվա և այլն) երկրաբանահետախուզական աշխատանքները հիմնականում իրականացվում են ոչ պետական միջոցների հաշվին, բայց երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ստացման պայմանները և իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները տարբեր են:

Այսպես, ԱՄՆ-ում պետական հողերում հետախուզումն իրականացվում է ազատ, բոլոր շահագրգիռ անձանց կողմից: Ընդերքի երկրաբանական հետախուզություն իրականացնելու իրավունք ստանալու համար անհրաժեշտ է ստանալ վճարովի լիցենզիա, որը տրվում է պետության կողմից և ստացողին բացառիկ իրավունք է տալիս իրականացնելու երկրաբանահետախուզական աշխատանքներ որոշակի տարածքի սահմաններում որոշակի ժամանակահատվածում: Եթե այդ աշխատանքների ավարտից հետո լիցենզիա ստացած անձը հայտնագործում է արդյունաբերական հանքավայր, ապա նա ստանում է առաջնահերթ իրավունք երկարաժամկետ վարձակալության պայմանագրի կնքման համար (որպես կանոն, 20 տարվա կտրվածքով երկարացման հնարավորությամբ) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով [6]:

Ֆրանսիայում հետախուզումն իրականացվում է անվճար՝ ընդերքի տեղամասի սեփականատիրոջ համաձայնությամբ՝ լիազորված գերատեսչության թույլտվության հիման վրա: Տվյալ թույլտվությունն ունի լիցենզիայի ձև և, ըստ էության, ներկայացնում է դիսկալիմ պայմանագիր: Օգտակար հանածո հայտնաբերած անձը իրավունք ունի հայտ ներկայացնելու՝ հանքավայրի արդյունահանման իրավունք ստանալու համար: Սակայն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը կարող է տրվել ինչպես այն անձին, ով հայտնաբերել է հանքավայրը, այնպես էլ երրորդ անձին, ով կառաջարկի փոխհատուցման ավելի լավ պայմաններ հանքավայրը հայտնաբերող անձին [7]:

Արգենտինայում հանքավայրի հետախուզման իրավունքի ստացումը տրվում է մրցութային գործընթացների իրականացման արդյունքում տրված լիցենզիայի հիման վրա: Եթե լիցենզիա ստացող ընկերությանը հաջողվում է հայտնաբերել հանածո, ապա այդպիսի ընկերությունը իրավունք ունի տվյալ հանքավայրը շահագործելու 25 տարվա ընթացքում: Եթե օգտակար հանածո չի հայտնաբերվել, հետախուզման վրա կատարված ծախսերը չեն փոխհատուցվում:

Լիտվական օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը օրենքով ոչ մի առավելություն չի տալիս ընդերքի ուսումնասիրվող հատվածի արդյունահանման և հետախուզ-

ման նոր լիցենզիաներ ստանալու համար, այլ տրամադրում է առաջնահերթ իրավունք հետախուզված հանքավայրերի արդյունահանման լիցենզիա ստանալու համար [8]:

Եզրակացություն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում երկրաբանահետախուզական աշխատանքները նպատակահարմար է և ներկայումս հնարավոր է էականորեն ընդլայնել հիմնականում ոչ պետական միջոցների հաշվին, այլ մասնավոր կապիտալի ներգրավման ուղիով՝ ի հաշիվ երկրաբանական հետազոտությունների թույլտվության և օգտակար հանածո հայտնաբերած անձին տրվող արտոնությունների ընդլայնման ճանապարհով, բայց հաշվի առնելով երկրի գերակա շահերը ընդերքօգտագործման բնագավառում և կայուն տնտեսական աճի ապահովման մեջ: Այդ արտոնությունները պետք է խթանեն նոր պաշարների հայտնագործումը, բայց անհրաժեշտ է, որ հետագա շահագործման պայմանները համապատասխանեն կայունության ապահովմանը. առնվազն թույլ կայունության հայեցակարգի շրջանակներում (ռեսուրսի արդյունահանման տեմպերի նվազեցում՝ ռեսուրսի պաշարների աճի պայմաններում): Մասնավոր ներդրումների ներգրավման համար նպաստավոր պայմանների ստեղծումից բացի, պետությունը կարող է մետաղական ռենտայի մի մասը ներդնել երկրաբանահետախուզական աշխատանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, ընդունված 28.11.2011թ., հոդվածներ 3.1, 3.30-31 և 32.1-2, 42.1:
2. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, հոդված 46, կետ 3:
3. Աղյուսակի կառուցման հիմքում ընկած են՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2001, 2006, 2011, 2012 և 2014թթ. տարեգրքերի տվյալները, էջեր՝ 169, 190, 214, 207, 204:
4. Trends in Sustainable Development. Chemicals, mining, transport and waste management. – United Nations, New York, 2010. – P. 9:
5. <http://www.geoteam.am>
6. Energy Transformation and End Use. U.S. Department of Energy. Energy Administration/ Wash. 2001.
7. **Жанэ А.** Недропользование: новый порядок – новые проблемы // Коллегия. – 2005. – 4. – С. 12-13.
8. **Кошиков О.И.** Особенности законодательства о недрах в Литовской Республике // Нефть, Газ и Право. – 2005. – 2. – С. 31-34.

Տ.Ա. ՄԿՐՏԿՅԱՆ, Տ.Մ. ԲԱԽՏՅԱՆ

**ЭКОНОМИКО-ПРАВОВЫЕ ЗАДАЧИ РАЗВЕДКИ НОВЫХ ЗАПАСОВ
ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ В АРМЕНИИ**

Современная горная промышленность РА эксплуатирует в основном разведанные в советское время месторождения. Государственные инвестиции в геолого-разведочные исследования почти отсутствуют, и сфера развивается за счет иностранных частных инвестиций, что приводит к необходимости разработки и реализации соответствующей интересам страны целевой политики в экономико-правовых аспектах. Сделана попытка найти реальную модель для Армении, которая может способствовать устойчивому развитию области.

Ключевые слова: запасы полезных ископаемых, геолого-разведочные работы, право на разведку месторождения, устойчивый экономический рост.

S.A. MKRTCHYAN, S.M. BAKHSHYAN

**ECONOMIC AND LEGAL PROBLEMS ON PROSPECTS OF NEW
MINERAL RESERVES IN ARMENIA**

RA modern mining industry basically exploits the mines discovered in the Soviet years. State investments in geological surveys are nearly lacking and the field develops on the account of foreign private investments. This is a problem which urges that a new policy be developed and implemented in the economic and legal sphere aimed at the interests of the country. The work attempts to find a realistic model to promote the sustainable development of the field in Armenia.

Keywords: mineral reserves, geological survey, right for a mine survey, sustainable economic growth.

ՀՏԴ 628.477.6.003.12

Ա.Վ. ՄՈՒՍԱԵԼՅԱՆ, Հ.Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԵԽՆԱԾԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ**

Ուսումնասիրվել և հիմնավորվել են Հայաստանի մետաղական տեխնածին հանքավայրերին ներկայացվող տեխնիկատեխնոլոգիական և տնտեսական չափորոշիչները, որոնց կիրառումը հնարավորություն է ընձեռում որոշել հետազոտվող հանքավայրի կարգավիճակը՝ լուծելով նաև բնապահպանական խնդիրներ:

Առանցքային բաներ մետաղական տեխնածին պաշարներ, կոնդիցիայի պարամետրերի համակարգ, նվազագույն արդյունաբերական պարունակություն, պայմանական օգտակար բաղադրիչ, կորզման գործակից, ինքնարժեք, գին:

Ներածություն: Մետաղական տեխնածին պաշարները՝ որպես արդյունաբերական հումք, մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես ազգային հարստության, այնպես էլ բնապահպանական առումով: Քանի որ ապագայում